

դտնի անշուշտ: Ապա, Հայաստանի սահմաններում բնակութիւն կը հաստատեն ու որպէս ազատ քաղաքացիներ կ'ապրին նաեւ Ղրղըլբաշները եւ ուրիշ աղանդաւորներ: Վերջապէս, Հայաստանի Հանրապետութիւնը իր սահմանների մէջ առնել կարող է նաեւ եւրոպացի գաղթականներ, պայմանով սակայն որ ռեւէ մեծ պետութեան քաղաքացիներ չլինին, ու պատրաստակամութիւն ունենան՝ նորաստեղծ պետութեան կարգ ու կանոնին եւ օրէնքներին ենթարկուելու:

Եւ այսպէս, դարերի առթած անարդարութիւնը վերացնել եւ բնաբարուած իրաւունքը վերականգնել կարենալու համար անհրաժեշտ է:

1. Երբեւէ Հայերի կամ այլ քրիստոնեաների պատկանած հողերը եւ ամէն կարգի անշարժ ու շարժական կալքերը նախկին տէրերին կամ նրանց ժառանգներին — եթէ դրանք չկան՝ համայնքներին — վերադարձնել:

2. Աւերուած մասնաւոր եւ հանրային շէնքերը վերանորոգել օսմանեան պետութեան եւ կամ յանցաւոր ցեղերի (քրդեր, թաթարներ եւ այլն) հաշուին:

3. Թափառաշրջիկութիւնը, որպէս բռնութեան, ծուլութեան եւ անքաղաքակրթութեան հիմք, ծայր աստիճան սահմանափակել կամ ըստ հնարաւորութեան, իսպառ վերացրնել:

4. Խստօրէն դիմաթափ անել բոլոր մահմեմտականներին:

Պատկանելի Հայագէտ-Հայասէրը այսպէս է վերջացնում իր խորհրդածութիւնները:

«Մենք գերմաններս, որ մինչեւ իսկ տասը տարի օտարի լուծի տակ չենք եղել եւ սակայն անհունօրէն տուժել ենք մեր ներքին անմխարանութիւնից եւ սեփական իշխանների ձեռից ու այժմ է որ ուզում ենք մեր միութիւնը վերականգնել, պարտաւոր ենք յիշել միշտ եւ հանապաղ, որ հայերն են եղել մեր դիւցազն կայսր Բարբարոսայի դիակը Սալէֆ գետի յորձանգնից ազատողները: Յիշել պարտաւոր ենք նաեւ, որ մի գերման Հոհենշտաուֆէ էր, որի ձեռից Լեւոն Ռուբինեանը 1198 թուականին Կիլիկիոյ արքայական թագը ընդունեց: Չմոռանանք այն եւս, որ Հայ երիտասարդները պատերազմից առաջ գոնջաղուող էին դիմում

մեր համալսարանները՝ իւրացնելու եւ իրենց երկրում պատուաստելու համար գերման գիտութեան մեթոտները: Մենք պարտաւոր ենք մեր բոլոր կարելին անելու որ քաւել կարողանանք այն յանցաւոր քաղաքակնութիւնը, որի սկիզբը դրաւ Փրիդրիխ Բ. կայսրը. այն է՝ նեցուկ հանդիսանալ քաղաքակրթութեան թըշնամի Տաճկաստանի պահպանմանը, ամէն կերպ նպատաւորել մահմեմտականութիւնը:

«Մեր պարտքն է նաեւ օգնել Հայերին, որ նրանք մերջապէս հասնին դարեր շարունակ հետապնդած ու տենչացած կէտ նպատակին՝

«Ապրիլ ու մեռնիլ սեփական պետութեան համար»:

* * *

Արդէն իսկ բաւական երկարեց յօդուածս, եւ ես չէի կամենայ աւելի ծանրանալ Մարքովարտի քաղաքական հայեացքների վրայ: Այսչափն ասեմ, որ նա այսօր էլ, հայ ժողովրդի եւ Հայաստանի անլուր յուսախարութիւններից յետոյ, մնում է հաւատարիմ իր այն կարծիքին, թէ՛ Հայութեան եւ թէ՛ թրքութեան մասին, որ դեռ տարիներ առաջ արտայայտել է իր «Հայ ազգի ծագումն ու վերականգնումը» աշխատութեան մէջ, եւ որին ընթերցողը ծանօթացաւ հանգամանօրէն:

Դեռ 1926-ի ամրան էր, որ նա հրատարակային մի դասախօսութեան մէջ, կազմակերպուած Բերլինի պարսիկ ուսանողութեան կողմից, քննութեան առաւ Ատրպատականի խընդերը եւ մերկացնելով տաճիկ համաթուրանականների նկրտումները հնուց անտի պարսկական այդ ընդարձակ ու հարուստ նահանգի վերաբերմամբ՝ խստօրէն ձաղկեց այդ քաղաքականութիւնը:

Այսօր էլ Մարքովարտ այն խորը համոզմանն է մնացել, որ տաճիկները եւ առհասարակ թրքութիւնը մարդկութեան եւ քաղաքակրթութեան թշնամիներ են, հայ ժողովուրդի գերեզմանափորերը, որոնց արժանի տեղը ո՛չ իսկ իրենց նախահայրերի միջին-ասիական տափաստաններն են, մնաց որ՝ Փոքր Ասիան ու Հայաստանը: Պատուոյ պարտականութիւն ունեցող մարդկութիւնը այդ աւերիչ ցեղը աւելի հեռունները վտարելու է, մինչեւ կրասնօեարսկ ու Սիբերիոյ խորերը: Տաճիկները աւելի լաւ վիճակի արժանի չեն, քան որ նրանք